

ՄԱՅԻՍ 2020

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում .....	8
1.3. Ջրահեռացման համակարգ .....	9
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	10
1.5. Էներգահամակարգ .....	10
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	11
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>12</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	13
2.2. Հասույթ .....	13
2.3. Գանձում .....	15
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ .....	15
2.5. Ջրաչափեր .....	17
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	18
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>19</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	20
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	21
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	23
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	23
3.5. Գոտիավորման աշխատանքներ .....	24
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>26</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>29</b>
5.1. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ .....	30
5.2. Դասընթացներ/ սեմինարներ .....	30
5.3. Արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն և անվտանգության ստուգայցեր .....	31
<b>6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>32</b>
6.1. Համակարգային ցանց .....	33
6.2. Բնտերակտիվ համակարգ .....	33

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

### Քաղաք Գյումրի

● Գոտիավորման բաժնի և Շիրակ տեղամասի կողմից 209 տնակային տարածքում արձանագրված ջրագծի վթարի հետ կապված՝ Մ.Խորենացի փողոցի վերջնամասում կատարվել են ջրամատակարարման բաշխիչ ցանցի լայնածավալ ուսումնասիրություններ: Հարակից տները սնուցող  $D=80$ մմ քայքայված ջրագիծը ամբողջ երկայնքով անցնում էր տների և սեփական հողամասերի միջով, ուստի որոշվել է այն հանել շահագործումից՝ կառուցելով շրջանցիկ  $D=40$ մմ,  $L=75$ մ ՊԷԹ ջրագիծ՝ համապատասխանաբար շահագործումից հանելով  $D=80$ մմ,  $L=90$ մ վթարային խողովակաշարը: Տնտեսվել է 1-1,5 լ/վ ջրաքանակ: Շահագործումից հանվել է նաև նույն  $D=300$ մմ թուջե խողովակից սնուցվող  $D=80$ մմ,  $L=65$ մ չգործող խողովակաշարը:



● Գյումրի քաղաքի Աբովյան փողոցում, հետագայում Իսահակյան փողոցով անցնող  $D=300$ մմ թուջե ջրագծի շահագործումից հանելու համար Շիրակ տեղամասի կողմից կառուցվել է  $D=75$ մմ,  $L=85$ մ ՊԷԹ ջրագիծ: Տնտեսվել է 3 լ/վ ջրաքանակ:



● Գյումրու Վ.Սարգսյան փողոցում՝ Օնկոլոզիական դիսպանսերի ետնամասում, դիսպանսերը նախկինում սնուցող պոմպակայանում տեղի ունեցած ջրագծի վթարի վերացման աշխատանքներին զուգընթաց ուսումնասիրվել է և շահագործումից հանվել նույն պոմպակայանը սնուցող  $D=80$ մմ,  $L=60$ մ պողպատե ջրագիծը: Արդյունքում տնտեսվել է 1 լ/վ ջրաքանակ:



● Գյումրու Վ.Սարգսյան փողոցում՝ Մախարովի հրապարակի հարակից տարածքով անցնող  $D=100$ մմ թուջե խողովակի վրա տեղի ունեցած խոշոր վթարը վերացնելու համար որոշվել է այն շահագործումից հանել՝ պեթ խողովակով ներանցման միջոցով: Քանի որ այն սպասարկում էր միայն մեկ բաժանորդի (գազալցակայանի), որոշվել է անցկացնել  $D=32$ մմ,  $L=85$ մ նոր խողովակ՝ շահագործումից հանելով  $D=100$ մմ,  $L=80$ մ թուջե խողովակ:

Ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ այդ թուջե խողովակին միացված է նաև D=80մմ, L=160մ պողպատե խողովակ, որը ևս հանվել է շահագործումից՝ արդյունքում տնտեսելով 2 լ/վ ջրաքանակ:



## Քաղաք Վանաձոր

● Վանաձոր քաղաքի Բաղրամյան 1-ին փողոցի 1-ին նրբանցքի 2-րդ տան ջրամատակարարումը խափանվել էր, ինչը վերականգնելու համար անհրաժեշտ եղավ փոխարինել D=25մմ, L=17գծմ խողովակը: Արդյունքում կխուսափենք շահագործման հետ կապված հետագա բարդություններից: Տնտեսվել է 1լ/վ ջրաքանակ:



Բաղրամյան 1փ. 1 նրբ. ջրամատակարարման սխեմա

## Գյուղ Հոբարձի



Հոբարձի գյուղը սնուցող ջրագծի սխեմա

● Հոբարձի գյուղի մի մասի ջրամատակարարումը խափանվել էր հորդառատ անձրևների հետևանքով. գետի հունը բարձրացել էր՝ փաստելով գյուղի մի մասը սնուցող ջրագիծը: Ջրամատակարարումը վերականգնելու համար անհրաժեշտ եղավ փոխարինել D=133մմ, L=36մ խողովակը: Այսպիսով, կխուսափենք շահագործման հետ կապված հետագա բարդություններից:

## Քաղաք Գավառ

● Գավառ քաղաքի Միքայելյան փողոցում ճնշման կարգավորիչ փականի տեղադրումից հետո նվազեցվել է ցանցում առկա ավելցուկային ճնշումը և տնտեսվել է 5լ/վ ջուր, ինչպես նաև էլեկտրաէներգիա: Բացառվել է վթարների առաջացման հաճախակիությունը:



## Քաղաք Դիլիջան

● Դիլիջան քաղաքում վթարաորոնողական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են թվով 2 վթար՝ Թբիլիսյան խճուղու և Կամոյի փողոցի վրա, որոնք գումարային կազմել են 3,5լ/վ: Վթարներն օպերատիվ կերպով վերացվել են:




## Գագարինավան

● Գագարինավանում մշակվող հողատարածքների մեջ հայտնաբերվել և վերացվել է 20մմ տրամագծով ապօրինի անհայտ միացում:



## Նոր Ախուրյան

● Շիրակ տեղամասի և Գոտիավորման բաժնի համատեղ աշխատանքի արդյունքում հնարավոր եղավ կանխել շահագործումից հանել  $D=150$ մմ,  $L=70$ մ քայքայված պողպատե խողովակաշար այն փոխելով ներանցման միջոցով: Ներանցումը կատարվել է  $D=40$ մմ,  $L=67$ մ նոր ՊԷԹ խողովակաշարով: Արդյունքում տնտեսվել է 2 լ/վ ջրաքանակ:



Մայիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1723
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	31,590
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	21,890
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	13,310
Ջրաչափական հանգույնցներ ուսուճասիրություն, սխեմաների կազմում	հատ	9
Շահագործումից հանված ջրագիծ	մ	6557.3
Կառուցված ջրագիծ	մ	2163.3
Կառուցված կոյուղագիծ	մ	357.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	37
Փոխարինված փական	հատ	26
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	251
Մաքրված դիտահոր	հատ	625
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	97.6
<b>Վերացված վթարներ</b>		
	<b>Չափման միավոր</b>	<b>Քանակ</b>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1016
Ջրահեռացման ցանցում	հատ	2023
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	528

Ապրիլ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	507	975	352

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է ապրիլ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամաչիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	49	4	0	0	0	0	0	00	0	53
Փոխարինված	302	26	5	3	3	3	1	1	0	344
Տեղափոխված	2	2	1	0	1	1	1	0	0	8
Տեխ. ակտ	26	14	0	2	0	1	0	0	1	44
Ընդամենը	379	46	6	5	4	5	2	1	1	449

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 192 ջրաչափ: Կատարված աշխատանքների 84,41%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:



### 1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մայիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1450	200	12
2	Մաշտոց	1540	160	6
3	Շահումյան	1060	149	11
4	Զեյթուն	530	182	0
5	Շիրակ	565	503	9
6	Ալավերդի	160	57	0
7	Ապարան	0	27	0
8	Արթիկ	1860	14	24
9	Աշոցք	0	6	0
10	Բերդ	0	3	43
11	Իջևան	890	35	12
12	Լոռի	2350	177	7
13	Նոյեմբերյան	0	19	0
14	Սպիտակ	30	14	0
15	Ստեփանավան	120	15	6
16	Թալին	0	24	12
17	Տաշիր	125	8	0
18	Էջմիածին	0	127	0
19	Չարենցավան	230	79	2.5
20	Աբովյան	1530	51	36
21	Հրազդան	2680	95	66
22	Աշտարակ	2655	7	0
23	Կենտրոն	710	710	18
24	Հյուսիս	220	220	12
25	Հարավ	0	0	6
26	Էրեբունի	230	230	3
27	Արմավիր	0	0	0
28	Արտաշատ	0	0	4
29	Արարատ	830	830	0
30	Մասիս	0	0	0
31	Գավառ	515	515	14
32	Սևան	410	410	0
33	Մարտունի	0	0	0
34	Վարդենիս	0	0	0
35	Ճամբարակ	0	0	0
36	Դիլիջան	0	0	36
37	Վայք	415	415	18
38	Եղեգնաձոր	0	0	0
39	Ջերմուկ	0	0	0
40	Սիսիան	40	40	0
41	Գորիս	0	0	0
42	Կապան	0	0	0
43	Մեղրի	0	0	0
	Ընդամենը	21145	5322	357.5

## 1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները՝

- **Սևանի N3 կոյուղու պոմպակայանում** կոտրվել էր հակադարձ փականը, պոմպը տեղահան էր եղել և ջուր չէր մղում: Հակադարձ փականը փոխարինվել և պոմպը վերատեղադրվել:

- **Դիլիջանի կոյուղու մաքրման կայանում** կոտրվել էր մանր ճաղավանդակի քերիչ սանրի աստաճները, որոնք վերանորոգվել և տեղադրվել են: Փոխարինվել են նաև մաշված օդամուղի ռոտորի թերթիկները: Կարգաբերվել են բոլոր սարքավորումները:

- **Ջերմուկի կոյուղու պոմպակայանում** վերանորոգվել է ստորգետնյա եռաֆազ մալուխը: Ջննվել են պոմպերը և էլեկտրական սարքավորումները: Կարգաբերվել է վթարների վերաբերյալ հաղորդագրություններ ուղարկող GSM սարքը: Իրականացված աշխատանքների արդյունքում պոմպակայանը աշխատում է անխափան:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	62,969	21.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	62,402	18
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	151,496	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	148,766	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	161,411	29.7
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	21,810	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,039	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,243	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	12,385	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	427	0	0

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ 0 տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակն ըստ աշխատանքի նկարագրի
Այցերի քանակ	2
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	113
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	15
Պոմպի ապամոնտաժում	2
Պոմպի տեղադրում	8
Էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում	1

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մայիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Արևելք» ՏՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար մայիս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 4 մեքենաների շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 5 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, աստաճանիփսեր, առանցքակալներ, կիսասունիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 14 անվադողեր նորոգվել են:

Փոխարինվել են թվով 47 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր:

Նորոգվել է թվով 4 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են աստաճանիփսերը, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 4 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 11 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ, միացներ:

Վերանորոգվել են թվով 7 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուփ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 6 մեքենամեխանիզմների վրա:

Թվով 4 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

01.01.2020 թվականին ԵՏՍՏ-ում տեղամասերի թիվին ավելացել է «Թալի» առևտրային տեղամասը ընդհանուր թվով 2020 բաժանորդով, տեղափոխվել է ՄՏՍՏ-ից:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.05.2020 թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում 337,670, իսկ ՄՏՍՏ-ում՝ 174,250 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2019թ. մայիսից - 2020թ. մայիս ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	422,736	323,794	76,6
		Իրավաբանական անձ	20,026	13,876	69,3
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	209,238	167,749	80,2
		Իրավաբանական անձ	6,890	6,501	94,4
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	631,974	491,543	77,78
		Իրավաբանական անձ	26,916	20,377	75,71

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	466,982	387,576	83,0
		Իրավաբանական անձ	23,728	14,682	61,9
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	254,620	209,238	82,2
		Իրավաբանական անձ	10,142	6,890	67,9
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	721,602	596, 814	82,71
		Իրավաբանական անձ	33,870	21,572	63,69

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 210 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 44 նոր բաժանորդ: ԵՏՍՏ տեղամասերում մայիս ամսվա ընթացքում ծառայություններ ստացած բաժանորդների թիվը (այցելությունների թիվը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 34,142 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 9,3 տոկոս, իսկ ՄՏՍՏ տեղամասերում, չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 23,242 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 12 տոկոս:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՏ-ի և ՄՏՍՏ-ի «Լոռի», «Շիրակ», «Սևան» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և տեղափոխվում են բաժանորդների տարածքից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մայիս ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 740, իսկ ՄՏՍՏ-ում՝ 381 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2020
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	282	306	43	631
		Իրավաբանական անձ	44	59	6	109
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	120	222	20	362
		Իրավաբանական անձ	9	10	0	19
	Ընդամենը		455	597	69	1121

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: ԵՏՏՍ-ում մայիս ամսվա ընթացքում փոխարինված 740 ջրաչափերի մոտ 56 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն, իսկ ՄՏՏՍ-ում փոխարինված 381 ջրաչափերի մոտ 66 տոկոսը (կամ 252 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել ԵՏՏՍ-ի մոտավ 22,299 մ3, իսկ ՄՏՏՍ-ի՝ 7,800 մ3 վերահաշվարկված հատույթ (74.09% Երևան և 25.91% մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հատույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



Հասույթի տվյալներում 2019թ. ցուցանիշից հանված են ՄՏՍՏ-ից ԵՏՍՏ տեղափոխված թվով 5 տեղամասերի (Աբովյան, Ապարան, Էջմիածին, Մասիս և Թալին) ցուցանիշները:

2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Մայիս ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1096,455 մլն դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 334,210 մլն ՀՀ դրամ: Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՍՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Մայիս ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 15 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 2.1 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 7 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 366 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Ապրիլ ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ներկայացված 10 000 000 ՀՀ դրամից բարձր բռնագանձման գործեր: Խոսքը վերաբերում է մասնավորապես հետևյալ ընկերություններին:

Հ/Հ	Պատասխանող	Հայցի առարկան /հայցապահանջը, հայցագիրը/, ՀՀ դրամ
1	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	14. 897. 386
2	Ազատաշեն համայնք	12. 511. 000
3	«Էլիտ Սերվիս» ՍՊԸ	11. 440. 944
4	«Նոր Հաճն» ՀՈԱԿ	114. 597.534
5	«Արտաշատի տրիկոտաժի Ֆաբրիկա» ԲԲԸ	14.009.047
	Ընդամենը	167.455.911

Առ այսօր պարտքերի մարման վերաբերյալ կնքված ժամանակացույցերի քանակը կազմում է 3387 հատ, իսկ պարտքերից ակնկալվող գումարը կազմում է 2. 680. 006. 883 ՀՀ դրամ:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2020թ		Բավարարված		Մերժված		2017-2020թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10216	1147046752	5677	525363103	111	16686834	4438	605699654	3088	244659702

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 55,57 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1,09 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.


Տարածաշրջան	Պարտքը 01.06.2020թ. դրությամբ (մլն. դրամ)	Այդ թվում մայիս ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում՝	4,330.2	1,249.7
Բնակիչ-բաժանորդներ	3,304.7	925.6
Իրավաբանական անձեր	1,025.5	324.1
Մարզերի տարածաշրջան, այդ թվում՝	1,861.3	441.7
Բնակիչ-բաժանորդներ	1,444.0	350.7
Իրավաբանական անձեր	417.3	91.0
Ընդամենը, այդ թվում՝	6.191.5	1.691.4
Բնակիչ-բաժանորդներ	4748.7	1276.3
Իրավաբանական անձեր	1442.8	415.1

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


ԵՏՏՏ սպասարկման տարածքում շուրջ 192.5 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:



2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն. դրամ (Երևան)



2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն. դրամ (Մարզեր)



## 2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.06.2020թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	453,511	386,517	85.2	23,044	14,676	63.6
	Առանց ջրաչափի	13,471	1,059	7.9	684	6	0.8
Մարզեր	Ջրաչափով	231,849	186,780	80.56	9,666	6,259	64.75
	Առանց ջրաչափի	21,225	1,256	5.92	240	3	1.25
Ընդամենը	Ջրաչափով	685,360	573,297	83.65	32,710	20,935	64.00
	Առանց ջրաչափի	34,696	2,315	6.67	924	9	0.97

Տվյալների բազայում 01.06.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	592,571	300,350	50.69	25,907	7,519	29.02
Մարզեր	264,802	73,658	27.82	10,774	2,038	18.92
Ընդամենը	857,373	374,008	43.62	36,681	9,557	26.05

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 1953, իսկ մարզերում՝ 296 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 93, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 11 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2294	1862	81.2
գ.Պոռշյան	1539	1012	65.8
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5793	1745	30.1

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, մարտ ամսին ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 6,922, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4,542, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 736, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,266, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 760, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 896 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 756 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացուժների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացուժների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	92	42,878	7,109,005
Մարզեր	32	7,415	1,229,517
Ընդամենը	124	50,293	8,338,522

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի մարտ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.2%, ինչը 0.1 %-ով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-նորում կարգաբերվել են 51 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ձնշման լուգերների գրաֆիկները.




Հաշվետու ամսվա ընթացքում գտտինքում ջրաքանակների ուսումնասիրության և հոսակորուստների հայտնաբերման համար 4 հասցեներում տեղադրվել են Seba UDM-200 տիպի հոսքաչափեր:

Ստորև ներկայացված է տեղադրված հոսքաչափերի հասցեները և գրաֆիկական պատկերները.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2020թ-ի մայիս ամսին, 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 214 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նույնպես նվազել է 241 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում.



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 7003 ԳՎտ.ժ. (1,51%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ\*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փոքրցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 3 հասցեներում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնք ճշտագրվել են ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից: Թվով 1 հասցեում վերացվել է առաջացած վթարը, որի արդյունքում կտնտեսվի մոտ 400 կՎտ էլեկտրաէներգիա:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 5031,32 ԳՎտ.ժ կամ 20.8 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին




#### Կատարված աշխատանքներ

Թվով 213 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 63 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

#### Բնվերտորների տեղադրում

● Երեք հասցեներում թվով 15 պնևմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 3838,39 ԳՎտ/ժամ (27%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Տեղադրված ինվերտորների սպառած էլ. էներգիա



Հաշվետու ժամանակահատվածում 44 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● Մայիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 130,213 ԿՎտ.ժ կամ 10,01% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 81,750 ԿՎտ.ժ կամ 4,15%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 192,135 ԿՎտ.ժ կամ 4,52 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵԴԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են մայիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Նոր կետերի ավելացում՝ ֆիզիկական բաժանորդներ	հատ	71
Նոր կետերի ավելացում՝ իրավաբանական բաժանորդներ	հատ	9
Ֆիզիկական բաժանորդների տեղադիրքերի ուղղում	հատ	277
Աշտարակ տեղամասի համար 15 քարտերի կազմում	հատ	15
Հայաստանի և Երևանի կոյուղագծերի վթարների թվայնացում	հատ	52
Smart monitoring հավելվածից ստացված տեղեկատվության հիման վրա ջրագծերի վթարների թվայնացում	հատ	1
Մուխութայան ջրատարի թվայնացում ԱՏՀ-ում	հատ	1
Թվայնացում և տվյալների բազայի ստեղծում Արագածոտնի մարզի՝ Աշտարակ քաղաքի և Սասունի կայանի համար	գյուղ	2
Աշտարակ քաղաքի թվայնացում և ԱՏՀ-ում տվյալների բազայի ստեղծում	հատ	1
Սասունի կայանի թվայնացում և տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	հատ	1
Ընթացակարգերի թարգմանություն բուլղարերենից հայերեն	հատ	4
Ակտիվների կառավարման տվյալների բազայի ստեղծման համար ընթացակարգերի մշակում	հատ	1
Իրավաբանական բաժանորդների տեղադիրքերի ուղղում	հատ	20

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերվել են մի շարք վթարներ.

Ապարան- Երևան

Ջրատարի վրա շրջայցի ժամանակ Մաշտոց ՇՏ-ի հետ հայտնաբերվել և վերացվել են անհայտ միացուճներ: Ընդհանուր առմամբ, տնտեսվել է 5լ/վ ջրաքանակ:



### Արգնի 1

Ջրատարի վրա հայտնաբերված վթարները վերացվել են, կազմում էին մոտավորապես 3լ/վ:



Դրանցից մեկի համար անհրաժեշտ եղավ կազմակերպելու ջրատարի կանգառ: Տեսեպվել է 150լ/վ ջրաքանակ:

### Շոր-Շոր սանիտարական գոտի

Դեռևս ապրիլ ամսից սկսած ուսումնասիրությունների և շին. աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ սանգոտում գտնվող տարբեր աղբյուրների ջրերը հավաքել 1 ընդունման խուց: Արդյունքում պոմպերի գործարկումը դարձավ ավելի մատչելի, ինչպես նաև բարձրացավ պ/կ-ի հասանելիությունը:

Ընթացիկ ամսում կատարվել են նաև ջրաքանակի կարգավորման աշխատանքներ և այլ ուսումնասիրություններ՝ ջրատարների կանգառներ կազմակերպելու համար:




## 3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● 2020թ. մայիս ամսվա ընթացքում գոտիավորման բաժինն իրականացրել է լայնածավալ աշխատանքներ, որտեղ ընդգրկել են ինչպես Երևան քաղաքի այնպես էլ Վանաձոր, Հոբարձի, Գավառ, Դիլիջան, Գագարինավան, Գյումրի, Նոր Ախուրյան, Գորիս, Սիսիան, Կապան համայնքների ջրամատակարարման ցանցերը:


● Ընտրված որոշ 24-ժամյա ջրամատակարարում ունեցող որոշ գոտիներում տեղադրվել են գիշերային ծախսաչափեր՝ հասկանալու համար ջրի բաշխման բալանսը և գաղտնի վթարների առկայությունը: Ուսումնասիրվում են նաև գոտիների գլխամասերում տեղադրված և Locator համակարգին միացված էլեկտրոմագնիսական ծախսաչափերի տվյալները: Այդ աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և տեղամասերի կողմից վերացվել են 110 հատ գաղտնի վթարներ՝ տնտեսելով 79,5 լ/վ ջրաքանակ և բարելավելով բազմաթիվ թաղամասերի ջրամատակարարումն ու վերացնելով բաժանորդների ջրի ճնշումների հետ կապված բողբոջները: Աշխատանքներն ամբողջությամբ արտացոլվել են SMART MONITORING & STRATEGY համակարգում:

● ՃԿՓ-ների կարգաբերման բաժնի հետ իրականացված աշխատանքների արդյունքում Երևանի Էրեբունի և Հյուսիս տեղամասերի տարածքներում տեղադրված ճնշման կարագավորիչների կարգաբերման արդյունքում տնտեսվել է 8-10լ/վ ջրաքանակ:

Երևանի «Չարենց» գոտու Քաջազնունի-Զավարյան թաղամասի գիշերային ծախսաչափի տվյալներ





Երևանի «Չարենց» գոտու Քաջազնունի-Զավարյան թաղամասի ՃԿՓ-ի ճնշումների տվյալներ





Վանաձորի Քիմիկներ թաղամասի գիշերային ծախսաչափի տվյալներ

Վանաձորի Տարոն թաղամասի գիշերային ծախսաչափի տվյալներ



● Գիշերային ծախսաչափերի տեղադրման և առավել խոշոր արդյունքներ արձանագրած աշխատանքներն ամփոփ կերպով ներկայացված են ստորև գետեղված աղյուսակում:

աղյուսակ 7

Հ/Հ	Գոտու անվանում	Ենթագոտի	Տեղադրված գիշերային ծախսաչափի հասցե	Վերլուծության արդյունք	Հայտնաբերված / վրացված վթարների քանակ	Խնայված ջրաքանակ (լ/վ)	Նշումներ
1	Չարենց	Քաջազնունի	Քաջազնունի Ջավարյան խաչ.	4-5լ/վ վթարի առկայություն	2	4.2	Վթարը վերացված է
2	Վանաձոր	Քիմիկներ Ր ՕԿՁ	ՕԿՁ-ի չոր խցում	6-7 լ/վ վթարի առկայություն	3	5.3	Վթարը վերացված է
3		Տարոն 2 ՕԿՁ	ՕԿՁ-ի չոր խցում	4-5 լ/վ վթարի առկայություն	1	3.5	Աշխատանքներ են իրականացվում մյուս վթարներն հայտնաբերելու ուղղությամբ
4	Երևան Ջեյթուն «2-րդ-ի տրանզիտ»	Ռուբինյանց	Գոգոլի փողոց	1-2 լ/վ վթարի առկայություն	2	1	Վթարը վերացված է
6	Երևան - Դավիթաշեն 2 թաղամաս	1-ին	46 շենքի մոտ	1-2լ/վ վթարի առկայություն	1	2	Վթարը վերացված է
		2-րդ	4/2 շենքի մոտ	1լ/վ վթարի առկայություն	1	1	Վթարը վերացված է

Գոտիավորման բաժինն էներգովերահսկողության խմբի հետ համատեղ աշխատանքներ է իրականացնում նաև Երևան քաղաքի այն պոմպակայաններում, որտեղ հոսանքի գիշերային ծախսերում նվազում չի նկատվում: Ուսումնասիրելով էլեկտրաէներգիայի չափիչների արդյունքները՝ էներգովերահսկողության խմբի աշխատակիցների կողմից ներկայացվում են պոմպակայանի հասցեներ: Գոտիավորման բաժնի կողմից ուսումնասիրվում են այդ պոմպակայանների ջրամատակարարման սխեմաները, որի արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ վթարներ:

Այդ հասցեներին և հայտնաբերված վթարների ջրաքանակները ներկայացված են ստորև.

աղյուսակ 8

Հ/Հ	Պոմպակայանի հասցե	Հայտնաբերված վթարի ջրաքանակ/լ/վ
1	Մարյան 4	1.5
2	Արցախի 20/1	0.7
3	Խուռյակով 70	1

Տարբեր տեղամասերում եղած խնդիրներն հասկանալու, եղած ավելցուկային ճնշումները կառավարելու և ջրաքանակներ խնայելու նպատակով տնօրենի և տեղամասի պետի հետ համատեղ իրականացվել են քննարկումներ, որի արդյունքում տեղադրվել են նաև ճնշման լոգերներ ու գիշերային ծախսաչափեր:

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



2020թ-ի մայիսը սկսվեց Աշխատանքի տոնով, որի կապակցությամբ Վեոլիա Թիմին իր շնորհավորանքները հղեց ու շնորհակալություն հայտնեց կորոնավիրուսի դեմ պայքարի պայմաններում լավ աշխատանքի համար «Վեոլիա Ջուր» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանը:



Վերելի Վեոլիա թիմ, ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեզ COVID-19-ի ընթացքում կատարվող ձեր ամենօրյա ու ինձ համար հերոսական աշխատանքի համար: Այս օրերին ջանամուտությամբ համաժողովրդի անհատիկ ընթացքն ապահովելու համար մասնագիտական փորձառության և հմտությունների կողքին անկասկածաբար են ձեր նվիրվածությունն ու անձնակազմի ներդրումը:

Մարիաննա Շահինյան  
Վեոլիա Ջուր ՓԲԸ գլխավոր տնօրեն

Իսկ գործ գարնանից քիչ չէր արվել, որն իր զարգացումը պետք է ստանար մայիսին, երբ շոգերի հետ կապված, ավելանում է ջրի սպառողը, որն իր հերթին ավելացնում է հանրային ուշադրությունը Օպերատորի աշխատանքի նկատմամբ:

Ելնելով այս հանգամանքից, հաշվետու ժամանակամիջոցին Հանրային կապերի բաժինը /ԶԿԲ/, ներգրավված Խորհրդատվական ՄԵՏՏԻԿԱ ընկերության հետ համատեղ, միջոցներ ձեռնարկեց Օպերատորի աշխատանքը հանրությանը ճիշտ ներկայացնելու ուղղությամբ առաջընթացն սկսառու դարձնելու, հանիրավի քննադատությունից խուսափելու և ՎեոլիաԹիմի գործարար համբավը բարձրացնելու համար:

Առավել ևս, որ մայիսին նույնպես նախատեսվում էր զգալի աշխատանք կատարել ինչպես համակարգում առաջացող ամենօրյա խնդիրների, այնպես էլ միջնաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Չնայած COVID 19-ի առաջացրած խնդիրներին, որոնցով պայմանավորված Օպերատորը շատ աշխատանքների ձեռնամուխ եղավ որոշ ուշացումով, մինչև նյուն է իրավիճակը ջրամատակարարման առումով հաշվետու ամսին Հայաստանում զգալի բարելավվեց, որի ապացույցը բողոքների քանակի ակնհայտ նվազումն է նախորդ տարիների նույն ժամանակամիջոցի նկատմամբ:

Հանրության հետ հաղորդակցության կապուղի դարձած ֆեյսբուք սոցիալական ցանցի Վեոլիա Ջուր/Veolia Armenia էջի միջոցով մշտապես ներկայացվել է Ընկերության աշխատանքը՝ օրական 2-3 հրապարակում իրականացնելու միջոցով: Իսկ դրանց գրավչությունն ու մատչելիությունն ապահովելու համար, լայնորեն կիրառվել է ինֆո-գրաֆիկա, կոլաժ, GIF, տեսանյութ, պոստեր, լուսանկար, հեշթեգեր /#ՄերօրյաՇերտներ, #Շնորհակալվե՛՛՛ք, #VeoliaTeam/, հակիրճ հաղորդագրություն՝ շահեկան թվերի ու փաստերի ներկայացմամբ:



«Վեոլիա Գրուփ»-ը ամբողջ աշխարհում, 2019թ.


Տնօր	Թափոն	Էներգիա
98 միլիոն մարդիկ անկախ ջրով մատակարարվում	42 միլիոն մարդիկ աղտոտված խառնուրդից մաքրվում	41 միլիոն մեգաՎտ/ժամ արտադրվում էներգիա
67 միլիոն մարդիկ ջրառատության համաժողովրդային	50 միլիոն տոննա առաջիկա մաքրվում	45,097 ջրամանրի կայանի կառուցում
3,548 լուսային ցուցիչներ արտադրվել են կայանի կառուցման	519,046 բիլլոն հավանություն	2,357 արդյունաբերական գործարարներ
2,835 կապուղի մաքրման կայանի կառուցում	675 քառակուսի կիլոմետրի ճանապարհի վերանորոգում	591 շառքերի և երկաթուղիների կառուցում

Բնականաբար, առաջին հերթին ուշադրություն է դարձվել արտակարգ իրավիճակներում գործելուն, բաժանորդների հնարավոր դժգոհությունը բացառելու կամ մեղմելու համար: Այստեղ կարելի է նշել Գառնի-Երևան, Արզնի-Երևան թիվ 1 և 2 մայրուղային ջրատարների տեխնիկական պատճառներով պայմանավորված ավանդական գարնանային վթարները, որոնց վերացման ընթացքը լուսաբանվել է երբեմն 2 կամ 3 անգամ օրվա ընթացքում: Մայիսի առաջին օրերի հորդ անձրևների ժամանակ ՋԼՄ-ների միջոցով հանրությանն օպերատիվորեն պարզաբանում է ներկայացրել Երևանի որոշ վայրերում անձրևաջրերի կուտակման պատճառների մասին ու ցույց տվել ՎեոլիաԹիմի աշխատանքը իրավիճակը շտկելու մասով, ինչպես օրինակ ՀՀ Կառավարության ավտոտնտեսությանը ջրահեռացման գործում ցույց տված օգնությունը:

Քանիցս ներկայացվել է «Արարատյան 1020մ տրամագծով ջրատարի վթարված հատվածների վերակառուցում» ծրագրի ընթացքը, որի շրջանակում ջրատարի 4 տարբեր հատվածներում կփոխարինվի մոտ 850 գ/մ 1020մ տրամագծով խողովակաշար: Արդյունքում հուսալի կդառնա մայրաքաղաքի մի շարք շրջանների և հարակից գյուղերի ջրամատակարարումը: Ուշադրության կենտրոնում է եղել նաև «Շոր-Շոր - Երևան» մայրուղային ջրատարի և համանուն պոմպակայանի վերակառուցումը, որը շատ կարևոր է Երևանն ամռանը ջրով ապահովելու գործում: Սակայն ջրաշինարարությունից բացի մեծ ուշադրություն է դարձվել ընկերության գործունեության մյուս ուղղություններին: Փորձ է արվել ներկայացնել համակարգի աշխատանքը հնարավորինս լայն: Մասնավորապես, հրապարակվել են թափուր աշխատատեղերի մասին հայտարարություններ, տարատեսակ ապրանքների և ծառայությունների մատակարարման մրցույթների հրավերներ, ջրանջատման վերաբերյալ հաղորդագրություններ... Սակայն այս բոլոր բազմաբանակ և բազմաբովանդակ հրապարակումներն ունեցել են մեկ միավորող գաղափար: Այն է՝ ցույց տալ, որ Հայաստանում գործում է ոչ թե ինչ-որ կազմակերպություն, նույնիսկ մասնագիտացված, այլ աշխարհառօրյակ ՎեոլիաԹիմը, ինչն ինքնին հանդիսանում է Վարձակալության պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման երաշխիք: Այս կապակցությամբ, եղել են հրապարակումներ նաև գուտ Վեոլիա Գրուփի գործունեության մասին ողջ աշխարհում:



Նման հանրահռչակ կազմակերպության մասը լինելու առավելությունն արտահայտվում է օրինակ Վեոլիա Ջրի աշխատանքում ժամանակակից տեխնիկայի ու տեխնոլոգիաների կիրառմամբ: Օրինակ երբ վթարների վերացման, ջրի կորստի հայտնաբերման համար կիրառում է ժամանակակից հոսակորուստ որոնող տարբեր սարքեր ակվաֆոն, ջրաքանակը ֆիքսող սարք, խողովակափնտրիչ սարք, ճնշման չափիչ սարք: Դրա շնորհիվ և աշխատանքի արդյունավետությունն է բարձրանում, և գործն է արագ կատարվում:



Չեն մոռացվել նաև տոները, հանրային կարևորության մյուս իրադարձությունները և հիշարժան օրերը: Այսպես, բացի մայիսի 1-ից Աշխատանքի օրից, Վեոլիան շնորհավորել հանրությանը մայիսյան Եռատոնի կապակցությամբ:

COVID-19 նույնպես իր արտահայտությունն է գտել ընկերության գործելաոճում և արտացոլվել հրապարակումներում: Այսպես, հոգալով աշխատակիցների առողջության

և անվտանգության մասին՝ #Վեոլիա-ի համակարգում շարունակել է աշխատավայրերի ախտահանման աշխատանքները: Օրինակ Գյումրիում ՀՀ ԱԲՆ-ի հետ համատեղ իրականացվեց #Veolia ընկերության վարչական շենքի, մեքենաների և մեխանիզմների ախտահանում: Մշտապես հանրությանը տեղակ է պահվել ԲՍԳ-ների աշխատանքի ռեժիմի, հաղորդակցության միջոցների ու բարձրացված խնդիրների լուծման կարգի մասին:

Ընդ որում, այս ամենի զգալի մասն իր տեղն է գտել նաև [veolia.am](http://veolia.am) կայքում որպես նորություն, մամուլի հաղորդագրություն և այլ պաշտոնական հայտարարություն: Մասամբ էլ ներկայացվել է ՋԼՄ-ներին, ՀՀ պատկան մարմիններին իրազեկված լինելու և այդ կերպ Վեոլիա Ջրի գործունեության մասին դրական կարծիք ունենալու համար:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ




## 5.1. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ծառայությունը, յուրաքանչյուր աշխատանքային օր Ընկերությունում՝ COVID-19 համավարակի կանխարգելման և Ընկերության ընթացիչ աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն փոխանցոց էլեկտրոնային գրությամբ ՀՀ Ջրային կոմիտե:

● Միաժամանակ զուգահեռ այս գործընթացին ՈԱԱ Ծառայությունը Ընկերության Ղեկավար կազմին և ստորաբաժանումների պատասխանատուներին Պարետի ընդունած որոշումների վերաբերյալ իրազեկեց:

● ՈԱԱ Ծառայությունը ՄՌՄ բաժնի հետ համատեղ օպերատիվ կերպով Ընկերությունում COVID-19 -ով վարակված կամ կոնտակտավոր աշխատողների մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներին:


Տրամադրված անհատական պաշտպանության միջոցներ և պոստերներ /մարտ-մայիս



## 5.2. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ

● Հաշվետու ամսում Ծառայությունը «Նարեկ» գիտահետազոտական կենտրոնի հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց 8 աշխատակցի համար «Ամբարձիչ սարքավորմամբ կահավորված մեքենաներ ել ավտոկոուսնկներ շահագործող վարորդների մասնագիտական որակավորման հետահար դասընթաց»:

2019-2020թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




### 5.3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՅՑԵՐ

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ժբ) կետի պահանջներով, Ծառայության անմիջական համակարգմամբ «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ կողմից մեկնարկեցին Արտադրական Վտանգավոր Օբյեկտ հանդիսացող Ընկերության թվով 18 ԱՎՕ-ի (2 քլորակայան, 13 ամբարձիչ սարքավորում, 3 կաթսայատուն) տեխնանվտանգության փորձաքննության աշխատանքները, որոնց շրջանակներում ուսումնասիրվեց Ընկերության ՀՏԿ-ներում շահագործվող ԱՎՕ-ների տեխնիկական անվտանգության փաստաթղթերի, տեխնոլոգիական սարքավորումների և տեխնիկական միջոցների, ինչպես նաև ԱՎՕ-ները շահագործող անձնակազմերի որակավորման փաստաթղթերի և ԱՎՕ-ների շահագործման անվտանգության հրահանգների՝ տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին համապատասխանությունը: Արդյունքում անկախ փորձագետների կողմից տրամադրվեցին փորձագիտական դրական եզրակացություններ:



● Ծառայությունը, զուգահեռ այս աշխատանքներին, իրականացրեց Անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 18 ՀՏԿ-ներում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում, ինչպես նաև կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

#### 2020 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



## 6.1. Համակարգչային ցանց

Մայիս ամսվա ընթացքում համակարգչային մասնագետների կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝

- Ներդրվել է կիրառվել է ավտոմատ էլեկտրոնային նամակներին պատասխանելու ֆունկցիոնալը՝ com@vjur.am էլ. հասցեի համար, բաժանորդների կողմից դիմումների և նամակների բարեհաջող ստացման մասին իրազեկման ավտոմատ տեղեկացման նպատակով:
- Կիրառվել է Yerevandjur.am և vjur.am հասցեներից դեպի veolia.am վերահասցեագրման տրաֆիկի վերահսկման նոր՝ Cloudflare համակարգ:
- Ֆինանսական տնօրինության տնօրենին տրամադրվել են “Հայկական Ծրագրեր” ծրագրային փաթեթի տվյալների բազաների պահեստային օրինակները՝ արխիվացման և սկավառակային կրիչներով՝ երկարատև պահպանման նպատակով:
- Գնվել և թարմացվել է Kaspersky հակավիրուսային համակարգի արտոնագրերը՝ կազմակերպության բոլոր համակարգիչների և սերվերների վրա:
- Ինտերակտիվ համակարգի սերվերի ծանրաբեռնվածության նվազեցման նպատակով՝ արխիվացվել, ջնջվել են ստորև ներկայացված պանակները (այդ պանակների պարունակությունը հասանելի օգտատերերի համար՝ արխիվային սերվերից առցանց ռեժիմում)՝
  - ▶ html/images/storage-2/fizcucmunq/2018/\*
  - ▶ html/images/storage-2/fizcontract/2018/\*
  - ▶ html/images/storage-2/commcontract/2018/\*
  - ▶ html/images/storage-2/comcucmunq/2018/\*
  - ▶ html/images/storage-2/svc/2018/\*
- Տեղադրվել և կարգավորվել է “Compliance tool” ծրագրային ապահովման սերվեր՝ համակարգիչների անվտանգությանը վերաբերող տվյալների հավաքագրման, գլխամասի մասնագետներին ավտոմատ տրամադրման նպատակով:
- Իրականացվել է Business wildcard SSL արտոնագրի մեկ տարվա երկարացման գնումը:
- Իրականացվել է “Վեոլիա Ջուր” ՓԲԸ-ի իրավաբանական և կոնտակտային տվյալների հաստատման գործընթաց՝ Business wildcard SSL արտոնագրի վավերականացման նպատակով:
- Իրականացվել է SSL արտոնագրի թարմացումը կազմակերպության սերվերներում:
- Իրականացվել են Linux և Windows օպերացիոն համակարգով գործող սերվերների թարմացումներ:
- Տրամադրվել են նոր օգտատերերին VPN-ներով աշխատելու արտոնություններ՝ օգտատերերի տանից աշխատանքն ապահովելու համար:
- Տեղադրվել և հանձնվել են շահագործման տեսահսկման համակարգեր “Վեոլիա Ջուր” ընկերության Աշոցքի և ք. Երևանի՝ Ա.Սարգսյան 6 հասցեներում:

## 6.2. Ինտերակտիվ համակարգ

Մայիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մշակվում է նոր հարթակը՝ տեխպայմանների գործընթացն ամբողջությամբ առցանց ապահովելու և բաժանորդների սպասարկման որակը բարելավելու ուղղությամբ:
- Կատարվել են 1-85 զանգերի կենտրոնի նոր ծրագրային ներդրման աշխատանքներ:
- Մի շարք թարմացումներ և փոփոխություններ են կատարվել ՀՕԿՀ-ի 378Ն որոշման փոփոխությունների հետ կապված՝ մասնավորապես կնիքների առկայության, ծանուցումների և ժամկետների, ձևաչափերի և այլն:
- Ակտեր:

Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է մայիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Տեղամաս	Իռախտման արձանագրություն		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	1	3.7	0.56
Էրեբունի	10	8.8	1.54
Շենգավիթ	9	1.2	0.18
Արաբկիր	16	3.0	0.49
Մաշտոց	3	2.7	0.44
Շահումյան	1	0.1	0.02
ՋԿԲ	9	7.4	1.32
Շիրակ	11	2.9	0.48
Արարատ	3	0.3	0.05
Հրազդան	4	0.8	0.14
Արտաշատ	2	0.3	0.04
Գավառ	10	2.1	0.36
Էջմիածին	1	0.5	0.08
Իջևան	1	0.1	0.01
Մեղրի	1	0.5	0.08
Սևան	1	0.4	0.06
Աշտարակ	2	0.6	0.09
Չարենցավան	1	0.5	0.08
Սյիշտակ	2	0.4	0.06
Ստեփանավան	1	0.5	0.09
<b>Ընդամենը</b>	<b>89</b>	<b>36.6</b>	<b>6.17</b>

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահովաքակցման գործառույթներ)  
 Ապահովաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է մայիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

<b>Լաբորատորիա</b>				
Տեղամաս	Միջանոթություն		Անաարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Էրեբունի	1	0.52	1	-
ԽՈՇՈՐ	-	-	4	14.63
Լոռի	8	0.96	86	0.52
Շիրակ	10	1.89	65	0.42
Արթիկ	1	0.26	7	0.05
Արարատ	2	0.43	8	0.10
Հրազդան	-	-	2	-
Ալավերդի	2	1.03	51	0.26
Աշոցք	-	-	4	-
Գավառ	1	0.52	17	0.09
Գորիս	1	0.52	11	0.07
Եղեգնաձոր	1	0.26	-	-
Էջմիածին	-	-	1	-
Թալին	2	0.39	-	-
Իջևան	1	0.13	4	0.02
Կապան	1	0.19	13	0.06
Մեղրի	-	-	1	0.01
Նոյեմբերյան	1	0.26	14	0.11
Արմավիր	-	-	5	6.76
Վայք	-	-	9	0.05
Աշտարակ	-	-	1	-
Սալիտակ	4	0.95	12	0.06
Ստեփանավան	-	-	2	0.05
Տաշիր	-	-	2	0.01
<b>Ընդամենը</b>	<b>36</b>	<b>8.29</b>	<b>320</b>	<b>23.25</b>



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա  
E-mail: info@vjur.am